

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

78(47.925)
Ս-64
[Կոմիտաս] 9697
Ստեփանյան, Ա.
Յուշեր.
Հր.

78(47+925)(092 Կոմիտաս)
Մ-64

ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՄՅՈՒՊՎԱՍ Է 1961 թ.

# ՀՈՒՇԵՐ

## ԿՈՄԻՏԱՍ

(Հեղինակի նկարներով)

ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿ
ԳՈՒՆԴԱՄԻՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

A I/2976 9697

Հայպետհրատ
Երևան
1947

А. МЕСРОПЯН

**ВОСПОМИНАНИЯ**

КОМИТАС

(На арм. языке)

Армгиз, Ереван, 1947

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Դաշնակահարուհի Ադամի Մեսրոպյանի հուշերը մեծատաղանդ Կոմիտասի մասին, կարելի է ասել, միակ քիչ թե շատ ընդարձակն է մինչև հիմա եղածների մեջ։ Հուշագրության մեջ կարևորագույնը փաստական տվյալներն են առհասարակ։ Փաստերի գնահատումներն ու խմաստավորումները հետո են գալիս, երբեմն շատ անակնկալ կապակցությամբ։ Այս պատճառով հուշագրի տված փաստերի կարևորն ու անկարևորը հաճախ դժվար է կանխատեսել և գնահատել։ Նախ պետք է գրի առնել այդ փաստերը։

Ներկա հուշերը կենդանի պատկերացնում են Կոմիտասին Պոլսում և Փարիզում։ Մի քանի փաստեր մեծանշանակ են։ Այսպես՝ Կոմիտասի ներկայությունը Պոլսում, ըստ երևույթին, մեծ շարժում է առաջ բերել այնտեղի հասարակության մեջ՝ գաղթավայր տանելով ժողովրդական երաժշտության թարմ հոսանքը։ Շնորհիվ Կոմիտասի հայ երգը և ժողովրդական արվեստի հասկացողությունը տարածվում է պոլսահայության մեջ։ Պակաս ուշագրավ չէ նաև այն հանգամանքը, որ թուրք հասարակությունը ևս մեծ հետաքրքրություն է ցույց տալիս դեպի հայ ժողովրդական երաժշտությունը։ Այդ հետաքրքրությունը տարածվում է նաև պոլսաբնակ այլ օտարազգիների մեջ։ Խանդավառ Կոմիտասը հմայում է բոլորին և բարձրացնում հայ ժողովրդական երգի նշանակությունը։ Նույնը և Փարիզում, ուր Կոմի-

տասը մեծ վարպետությամբ ցուցադրում է հայ երգը։

Հեղինակը կարողացել է տալ Կոմիտասի հմայքը, նրա բնավորության գծերը, հետաքրքիր էպիզոդները սրատաուչ դեպքերը և այլն։ Միաժամ այս գրքվածքում տեսնում ենք Կոմիտասի պրպտումները հայ երաժշտության նյութերի հետքերով։ Շեյխի հետ հանդիպման տեսարանը այդ տեսակետից շատ ուշագրավ է։ Հուշերը գրված են ջերմ, սիրով և խընամքով։ Մեծն Կոմիտասի կենսագրության մեջ սա կբռնի իր արժանի տեղը։

Դ. ԴԵՄԻՐՃԻՅԱՆ

## ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ժան Գուժոն փողոցին վրա կգտնվի Փարիզի հայոց եկեղեցին։ Պատահականությունը երջանկաբեր է. ժամանակավոր մեր ապրելիք հյուրանոցը՝ «Հոթել Ռիվոլի» եկեղեցին դիմացն է։ 1907-ի ապրիլ ամսին, մորս առաջնորդությամբ Փարիզի հայոց եկեղեցիին հյուրասարն ենք. մենք երկու քույր և փոքր եղբայրս, արդեն երաժշտություն սորվողներ, առանձին հետաքրքրքրությամբ և սրտատրոփ կսպասենք անկյունը տեղավորված դաշնամուրին տիրոջը, որուն բացառիկ երաժշտական շնորհք ունենալը կվկայե երիտասարդ ուսանող Հայկ-Արամը։

—Ահա Կոմիտաս վարդապետը,—ցույց կուտա Հայկ-Արամը։

Հանկարծակի կտեսնեմ սև հագուստներով, կարմրաթուխ մորթով, ցանցառ փոքրիկ մորուսով, համակրելի սև աչքերով երաժիշտ Կոմիտասը, որ փութկոտ քայլերով թեին տակի կլոր թղթի ծրարները դաշնամուրին վրա զետեղելե վերջ, բարի ժպիտով բոլորիս կծանոթանա և կսկսի հետաքրքրվիլ առանձնապես մեր երաժշտական ուսանողությամբ։

Առաջնորդարանին մեջ մեզի և ուրիշ հյուրերու հետ ընթրելե վերջ, առաջնորդ հոր՝ Վռամշապուհ Քիպարյանի հրավերով Կոմիտասը դաշնամուրին դիմացը անցնելով, հաղիվ մատները սահեցնելու վրա, ահա կսկսի հիանալիորեն երգել. «Կանչե՜, կռունկ, կանչե՜, քանի գարուն է, զարիբներուն սիրտը գունտ-գունտ արուն է»... Կոմիտասյան բացառիկ, հարազատ կատարումով այդ երգը՝ առաջին օրվընե դրոշմվեցավ մտքիս և հոգույս մեջ...

Վեց երկար օրեր, մինչև Կոմիտասին Զվիցերիա մեկնելը առաջնորդարանի նույն դահլիճին մեջ, վայելեցինք իր երգերուն թանկագին շարանները։

Երգիչ—երաժիշտ Կոմիտասը այդ օրերեն գրավեց մեր պա-

տանի սերն ու ուշադրությունը, և այդ ժամանակն, հեռվեն կամ մոտեն, դարձավ մեր ընտանիքին անդուգական սիրելին։

1907 թվականն Կոմիտասը արդեն Եվրոպայի կենտրոնական քաղաքներուն մեջ (Փարիզ, Պերլին, Լայպցիկ, Ժընև, Պրյուքսել) հանրածանոթ երաժշտագետ էր դարձել, շնորհիվ հայ ժողովրդական երգերուն նվիրված իր բազմաթիվ համերգներուն և դասախոսություններուն, որոնց բացառիկ երաժշտական արժեքը օտար մամուլի էջերով կհասնեին մեզ մինչև Լոնտոն...։

1911-ի հունվարի 11-ին, Լոնտոնի Գուլինս Հոլ-ի համերգային դահլիճին մեջ, Արամ Ռաֆֆիի և օր. Զապել Պոյաճյանի կազմակերպած տարեկան մեծ նվագահանդեսը (ի նպաստ Հայաստանի կարոտելոց) նյութական բացառիկ հաջողություններու հասավ՝ շնորհիվ Կոմիտասի հայ ժողովրդական երգերուն, զորս առաջին անգամ կատարեց հեղինակին մերձավոր աշակերտուհին՝ Փարիզեն հրավիրված հայանի երգչուհի օր. Մարգարիտ Պալայանը...

1912-ին, Լոնտոնեն մեր վերադարձին, քանի մը օր վերջ բաղդ ունեցա իբրև դաշնակահար—ուսուցչուհի դասավանդելու Բերա-Սաքը-Աղամ, Լալե փողոց Համազգայի Օրիորդաց Վարժարանը։ Ըստ հոս տեղեկությանց, Փարիզի առաջնորդարանեն մեզ ծանոթ երաժիշտ-երգիչ Կոմիտասը ժամանակավորապես հաստատվեր էր Լալե փողոց, Համազգայի Օրիորդաց Վարժարանին դեմ-հանդիման փանսիոնին մեջ։

Որքան բարեպատեհ էր առիթը, երբ առաջին անգամ հոս հետ այցելեցինք մեր սիրելի Կոմիտասին, որ մեզ հայանեց Պոլսո մեջ երգչախումբ մը և երաժշտանոց մը կազմակերպելու իր նպատակը։ Նա ինձ առաջարկեց մեր դպրոցի աշակերտներեն ձայնական ավյալներով օժտվածները իրեն ծանոթացնել։

Ահա այդ առթիվ կոկսի իմ և խումբ մը չափահաս աշակերտուհիներու և ծանոթներու մոտիկ հարաբերությունը Կոմիտասին հետ։

Համազգայց Օրիորդաց Վարժարանի դիմացը գտնվող այդ հյուրանոցը իրեն կապեց մեր սրտերը։ Մեր սիրելի Կոմիտասի միջոցավ մենք այդ տան մեջ ծանոթացանք Ռուսատանեն, Եվրոպայեն Պոլիս այցելող հայ արվեստագետներու և մտավորականներու, որոնց մեջ էին Ավետիք Իսահակյան, Սիմանթո, Դ. Վարուժան, Փանոս Թերլեմեզյան, Տիրայր վարդապետ, Գարեգին

վարդապետ Հովսեփյան, նկարիչ Եղիշե Թադևոսյան, Սևումյան ամուսիններ... Ասենք՝ շատերը կապրեին այդ պատմական շեն-քին մեջ, խիստ սիրալիր, ջերմ մթնոլորտի մեջ, որուն առանցքը կը կազմեր շին ու շենշող մեր սիրելի Կոմիտասը։

Կարճ ժամանակվան մեջ, Կոմիտաս վարդապետը՝ սիրելի եր-գիչ արվեստագետը դարձավ Համազգայց Օրլորդաց Վարժարանի բարձրագույն դասարանի աշակերտուհիներուն, որոնք ի նշան իր-ենց խոր հարգանքին, թարմ ծաղիկներով սկսան զարդարել ա-նոր սենյակը։

Հիշատակելի է հետևյալ դեպքը։ Դեկտեմբերի խստաշունչ օր մը Կոմիտասին հյուր եկած էին իր էջմիածնա ընկերներեն ման-րանկարիչ վարդապետ դասախոս Գարեգին Հովսեփյանը և նկարիչ Եղիշե Թադևոսյանը, որոնք Պոլսո մեջ ելույթներ ունեցան, խան-դավառելով երիտասարդությունը։ Համազգայց վարժարանի տնօ-րեն Աղավնի Զագրյան, ուսուցչուհի Արշակուհի Թեոդիկ և բար-ձրագույն կարգի աշակերտությունը վաղօրեն պատրաստած էին շքեղ ծաղիկունջեր՝ ի պատիվ վերոհիշյալ երկու հյուրերուն։

Կոմիտասը Համազգայցի աշակերտության նվիրած ծաղիկ-փունջերը կառքերուն մեջ տեղավորելե վերջ, ժպիտը երեսին, նստելով իր սիրելի Գարեգինի[1]) և Եղիշի մոտ, սկսավ սրախո-սել. «Առ քեզ հարսանեկան կառք մը, սակայն առանց հարսի»...։

Պոլսո Ղալաթիո Լուսավորիչ եկեղեցին հռչակավոր է իր լայ-նանիստ, և կողք կողքի կառուցված երեք փառավոր եկեղեցիներ-ով։ Բացի դարավոր պատմական արժեքեն, հիշյալ եկեղեցին պոլսահայության ամենամեծ ուխտատեղին է։

Ամեն հինգշաբթի, դեռ վաղ առավոտյան, Պոլսո հեռավոր ար-վարձաններեն հոծ բազմություն մը եկեղեցի կուգար։ Ես, իբրև Ղալաթիո Լուսավորիչ եկեղեցու ավագ քահանային աղջիկը, ման-կական օրերես մաքիս և հոգույս մեջ ունիմ անկե կուտակված հիշողություններ, որոնցմե ամենաթանկագինը պիտի հիշեմ այս-տեղ։

Ներսես Պատրիարքի կառուցած Պոլսո Ղալաթիո անվանի Կեդրոնական բարձրագույն վարժարանը կգտնվի Լուսավորիչ եկեղեցու շրջապակին մեջ։

---

[1]) Ներկայիս՝ Կիլիկիո Տան Գարեգին Ա. Կաթողիկոս։ Ծ. Հ.

1911-ին, Կոմիտասը իր Պոլիս հասած օրերեն սկսելով Կեղրոնական Վարժարանին հայկական երաժշտության դասախոսը դարձավ։

Այդ վարժարանին մեջ Կոմիտասի հայ երաժշտության դասախոսություններնը աշակերտության բացառիկ ոգևորության աղբյուրը հանդիսացան։ Կարճ ժամանակվան մեջ կազմեց 300 հոգինոց երգչախումբ մը, որուն մեջ մտան Կեղրոնականի բազմաթիվ աշակերտներ։

Անմոռանալի են այն հինգշաբթիները, երբ Կոմիտասը իր երգչախումբով Դալաթիո Լուսավորիչ եկեղեցիին արարողությանը կմասնակցեր։

Երգչախումբին փորձերուն հաճախ ներկա եմ եղեր։ Կոմիտասը բացի իր աշակերտներեն, մեծ բծախնդրությամբ կը պատրաստեր նաև քահանայից և զղրաց դասու բաժինները։ Որքան անմոռանալի պիտի մնա Դալաթիո դարավոր եկեղեցվո 1914-ի ավագ հինգշաբթիի քառաձայն պատարագը, որուն թե հեղինակը, թե օրվան պատարագիչն էր Կոմիտասը։ Այդ պատմական օրվան Կոմիտասյան քառաձայն պատարագին համար՝ ամբողջ մեծ պահքի յոթ երկար շաբաթները, թե իր երգչախմբին մեջ, թե Կեղրոնական վարժարանին մեջ, հեղինակը հրավիրեց Պոլսո զանազան արվարձաններեն զգրաշանները, զանոնք մարզելու համար քառաձայն երգեցողության մեջ։ Անոնց միաձույլ և վարպետ կատարումը եկավ ապացուցելու, որ Կոմիտասը մեծատաղանդ ղեկավար մըն էր միևնույն ատեն։

1912 թվականեն սկսյալ՝ Կոմիտասի «Գուսան» երգչախումբը իր հաճախակի համերգներով հայտնի դարձավ համայն պոլսահայության, որ նույնիսկ հեռավոր՝ արվարձաններե՝ կին

տած, իր շուրջը հավաքված երգչախումբին երկսեռ անդամներուն հետ մտերմորեն կխոսեր, մերթ ընդ մերթ կատակելով...

Ղեկավար Կոմիտասը, ուղիղ և ձիգ կանգնած, ձեռքի սպիտակ քամոթոնը բարձրացնելով արագորեն կբաժներ ձայները և իր «մոգական գավազանով» իրեն կհպատակեցներ երեք հարյուր հոգինոց երգչախումբը։ Վայ այն աշակերտներուն, որոնք հեռավոր արվարձաններե հև ի հև սրահ մտնելով գաղտագողի կդրավեին իրենց տեղերը։ Նման դեպքեր չէին վրիպեր Կոմիտասի աչքերեն։ Դադարի ատեն ծիծաղով մը դանոնք կանվաներ «Քեռթենքելներ և Սեղբոս—Թորոսներ»[1]։

«Գուսան» երգչախմբին վեցամյա համերգներուն շարանները ընդհանուր պոլսահայության ծանոթացուցին հայ ժողովրդական և գեղջուկ երգերուն ճշմարիտ հմայքը։

Ոչքան խոր և վեհ ապավորություն կը գործեր լսողին և դիտողին վրա, երբ «Գուսան» երգչախումբը Կոմիտաս վարդապետի ճարտար ղեկավարությամբ կսկսեր ուժգ ձայնով երգել հայ ժողովրդական երգի գոհարները։

Կոմիտասի ջանքերը ի դերև չելան. մեկ քանի տարիներու ընթացքին, անոր ուժգ երիտասարդ աշակերտները խմբավարներ դարձան, որոնք մինչև օրս ալ շարունակելով իրենց վարպետին մեծ գործը աշխարհիս զանազան կողմերուն մեջ, հայանվեմքեր դարձան, հայ և օտար ազգերուն ծանոթացնելով հայ ժողովրդական երգը։

Կոմիտաս վարդապետը իր կրթիչ և դաստիարակիչ ազդեցությունը սփռեց «Գուսան» երգչախումբին վրա, և հակառակ իր զվարթ բնավորության, որքան բուռն էր դայրույթը, երբ իր աշակերտները անշնորհաբար էին, կամ իր նեռկայության անտեղիորեն իրարու հետ օտար լեզվով կխոսեին։ Նույնպես երբեք չէր հանդուրժեր, որ իր աշակերտները եվրոպական անուններ կրեին։ Նման տարբերություն ան վշտացյալ շեշտով մը կբսեր. «Հայ ժողովրդի զավակներ, դուք կարդացեք Մովսես Խորենացի, Եղիշե, Նարեկացի, Խաչատուր Աբովյան, Ռաֆֆի, Ալիշան, Պեշիկթաշլյան և տեսեք թե ով ենք մենք»։

Ամեն օր նույն ժամերուն Կոմիտասին կպատահեինք Կալաթայի

---

[1]) Քեռթենքելի՝ մոլես. Սեղբոս-Թորոս-Կոմիտասի սիրած մակդիրը՝ ուշացողներուն ուղղված։ Մ. Հ.

Թյունելեն մինչև Բանկալթիի իր բնակարանը տանող պողոտային վրա, երբեմն առանձին, հաճախ՝ իր գրականագետ մտերիմներուն— Սիմանթոյի, Ռուբեն Զարդարյանի, Ռուբեն Սևակի, Հրանդ Ասատուրի, երբեմն ալ իրեն ուղեկցող խումբ-խումբ ուսանողության հետ։

Կոմիտասը իր մեծ արվեստով նուշնիկ օտար աշակերտության հարգանքին արժանացած էր։

1913-ի սեպտեմբերին, Կոմիտասը գիս շտապ կանչելով իր տունը, հայտնեց հայ տառերու գյուտին 1500 և տպագրության 400-ամյակին առթիվ իր կազմակերպելիք նվագահանդեսի մասին եվ հայտնեց այդ օրվան համար իր սրտին մոտիկ փափաքը, թե համերգին մասնակցողները միայն հայ արվեստագետներ պետք է ըլլան։ Նա ինձ առաջարկեց, իբրև նորավարտ դաշնակահարուհի, որ ես ալ ունենամ իմ բաժինը...

Այդ օրը Կոմիտասը երկար ժամեր իր դաշնամուրին նվագով ջանաց գիս ընտելացնել հայկական երաժշտության ոճին կրկնել տալով, թե իր ձեռագիր երկու պարերեն «Ունաբին» ու «Մարալին» և թե Նիկողայոս Տիգրանյանի Ա—տեսարի հայկական ժողովրդական կլոր պարերը։

Բայց դժբախտաբար անոնք ունենալով դժվարին ռիթմ, անհասկնալի մեցին ինձի համար։ Մեծ երաժշտագետը նկատելով հայ երաժշտական ոճին տիրանալու դժվարությունները, թույլատրեց, որ ես գիտցած դասականներես նվագեմ։ Այդ առթիվ լսելով Պեթհովենի ութերորդ սոնատի կատարումս, անուշս գրեց իր ծոցատետրին մեջ։

## ԿՈՄԻՏԱՍԻ ՊՈՒԼՍՈ ԲԱՆԿԱԼԹԻԻ ՏՈՒՆԸ

Բերայի Բանկալթի թաղամասին մեջ, գլխավոր պողոտային վրա, Ս. Հակոբի ախարեթներ կոչված տուներեն վերջնոյն մեջ կապրեր Կոմիտասը, իրեն ընկեր ունենալով հայտնի նկարիչ Փանոս Թերլեմեզյանը։

Կոմիտասի աջակցությամբ Փանոս Թերլեմեզյանը այդ բնակարանի երրորդ հարկին մեջ հիմնեց իր աշխատանոց—դասարանը՝ ամեն հարմարություններով, նույնպես երկրորդ հարկին վրա

վարձեց երկու այլ սենյակներ, որտեղ ցուցադրվեցան իր նկարները։

Բանկալթիաբնակ որ հայը իր օրվան երթևեկին չհանդիպեցավ Կոմիտասի տունը մտնող ելնող խումբ-խումբ օտար մարդկանց, կամ անոր դրան առաջ պաշտոնական կառքերով եկող դեսպանական այցելուներու։

Գալով մեզ, Բերայի խումբ մը երիտասարդ նորավարտ արվեստագետուհիներուս, թե երաժշտական և թե նկարչական գործերու պատրվակներով այդ արվեստի օջախը հաճախակի մտնելու առիթներ ստեղծեցինք։ Մեր խումբի ընկերուհիներեն չորսը Փանոս Թերլեմեզյանի նկարչական դասարանին լավագույն աշակերտուհիներն էին,—օրիորդ Ատրինե Տոնելյան (դուստր բանաստեղծուհի Սիպիլի), օրիորդներ Էլիզ Ճենտերեճյան, Շուշանիկ Պոշնակյան (ներկայիս նկարչուհի ի Փարիզ) և պելճիքացի Ժան-Պեռթինեի։

Շաբաթ կամ հինգշաբթի կես օրերեն վերջ կը բարձրանայինք իր տան երկրորդ հարկը, փողոցին վրա նայող լուսավոր մեծ սենյակը, որ Կոմիտասի ընդունարան—աշխատանոցն էր։

Կդտնեինք զինքը սենյակին պատշգամին վրա, իր լայն բազկաթոռին մեջ, ուր կկարդար, կամ դաշնամուրին և կամ ֆիզհարմոնիային առջև նվագով զբաղած։

Որքան պաշտելի էր ան, երբ մեր խնդրանքին վրա, կերգեր երիտասարդական կյանքին խոսող մեր ամենասիրելի երգերեն «Իմ չինարի յարը», «Էս գիշեր լուսնյակ գիշեր»-ը, «Քեզեր-ցոլեր-ը, որոնց երեքն ալ Կոմիտասյան ինքնուրույն արվեստի նշմուշներ, մեզ կտանեին դեպի մեր սիրելի հայրենիքը, դեպի Հայաստան, դեպի անոր հիասքանչ բնությունը, դեպի հայ շինականի չարքաշ աշխատանքն ու վաստակը։

Մեծ երաժշտագետը մեր սրտին և հոգվույն մեջ բացի հայ տոհմային երաժշտության սերն ու ճաշակը ներարկելե, երբեք չեր մերժեր պելճիքացի օրիորդ Պեռթինեի խնդրանքով երգելու Շուպերթի սերենատը գերմաներեն բառերով, Մասընեի ռոմանսը ֆրանսերենով, Հենսլի «Ալելույան», Կունոյի և Ցիգրան Զուլսաճյանի «Ավե Մարիա»-ները իտալերենով։

Կոմիտաս վարդապետի աշխատանոցին մեջ հաճախակի կը-հանդիպեինք պոլսահայության քաջ ծանոթ եվրոպացի խոշոր

երաժիշտներեն Հեկեի, Ֆուլանիի, Լանկիի, Սելվելի, Կուռքի և Սինանյան եղբայրներուն, իսկա Մանասին և դեռ շատ շատերուն։

1911-ի ամառեն սկսյալ մինչև հաջորդ տարվա վերջը, Կոմիտասի-ատանը մենք հաճախակի պատահեցանք համայն հայության զույգ մը սիրելագույն բանաստեղծներու՝ Ավետիք Իսահակյանին և անոր անբաժան մտերիմ ընկեր Սիմանթոյին (Ատոմ Եարճանյան)։ որոնք նուշնվես կապրեին Բանկալթի, մեծ երաժշտագետի բնակարանին խիստ մոտիկ։

Ահա տասնյակ տարիներե վերջ ալ, կարելի է նվիրականությամբ չվերհիշել այն հավետ անմոռանալի պատկերները, որոնց առանցքը կկազմեր հայ ժողովուրդի երդի կոթողը, անմահ Կոմիտասը։

## ԿՈՄԻՏԱՍԻ ՓԱՌՔԻ ՕՐԵՐԵՆ

*(1913, Հոկտեմբեր)*

Հայ տաղերու դյուտին 1500 և տպագրության 400-ամյակին առթիվ Կոմիտասի նախաձեռնությամբ կազմակերպվեցավ մեծ նվագահանդես մը Բերա, Փքթի-Շանի ձմեռային թատրոնին մեջ։ Ներկա էին բազմահազար հայեր, որոնց մեծ մասը Պոլսո հեռավոր արվարձաններեն։

Փքթի-Շանի մուտքի ընդարձակ պարտեզեն սկսյալ, այդ մարդկային դանդվածը իր խլացուցիչ մխոցով շշմեցուցիչ մթնոլորտ մը ստեղծեց։ Անհնարագրելի էր դանվիճին թե ներքին, թե արտաքին միջանցքներուն մեջ, մինչև երկաթապատ ձողերուն կառչած հարյուրավոր մարդկանց տեսքը։ Շատեր հաղիվ տեղավորվեցան Փքթի-Շանի միջանցքներուն վրա, առանձնատասուկ լոժերը զբաված էին տաքի վրա սեղմված մարդիկ։ Վերնատունեն լսվող ազմուկը կղզացներ ազգային այդ մեծ տոնին ժողովրդականությունը։

Մասնակցող արվեստագետները քուլիսի դռնեն ներս հաղիվ կմտնեին... Այնտեղ էր Կոմիտասը՝ ժիր ու կորովի, սիրալիր շրջապատված բարեկամներեն,—Ռուբեն Սևակ, Սիմանթո, Բյուզանդ Քեչյան, Ռուբեն Զարդարյան, բժիշկներ Տաղավարյան, Գենոն և

զեռ ինձի դատ անծանոթներ, որոնցմէ շատերը ելոյթ ունեցան օրվան հանդէսին մէջ։

Կազմակերպիչ Կոմիտասը ժամացույցը ձեռքին բռնած կորոշեր յուրաքանչյուր ելույթին տևողությունը։ Երեկոյան ժամը 8-ին Կոմիտասը որոշընդոստ ծափահարությանց մէջ առաջինը երևաց բեմի վրա և իր հակիրճ ներածականով դրվատեց Սահակ-Մեսրոպյան հանճարեղ դյուտը և հոբելյանական համազգային տոնը հայտարարեց բացված։ Անմոռանալի էր Կոմիտասի խանդավառությունը, որով ոգևորվեցավ ժողովուրդը։ Հանդիսականները մեկըզմեկու հետևե իրենց պերճախոս ելույթներով արժանացան ջերմագին ծափահարությանց։ Կոմիտասի ամենասիրելի ընկերներեն հայտնի բանաստեղծ Սիամանթոյի օրվան տոնին նվիրած «Սուրբ-Մեսրոպ» երկարաշունչ բանաստեղծությունը արժանացավ որոտընդոստ ծափահարությանց և Կոմիտասի ջերմ շնորհակալության։

Դաղարի պատուն Կոմիտասի ոգևորությունը իր գագաթնակետին հասավ։ Նա բեմին հետև, ճակատն հոսող քրտինքին անդիտակ, իր բազմաթիվ ընկերներուն շնորհավորությունը կընդուներ, որ, Պոլսո թյուրքական հայատյաց ռեժիմին տակ հերոսաբար մաքառելով կարողացավ կազմակերպել հայկական այսպիսի տոնահանդես մը...։

Սկսավ մեծ նվագահանդեսին առաջին բաժինը։ Իրարու հետևե հանդես եկան Սինանյան երեք եղբայրները, որոնց ավագ եղբոր՝ հայտնի դաշնակահար երգահան Հարություն Սինանյանի օրվան տոնին նվիրված քայլերգը և երգերը արժանացան ջերմ ընդունելության։ Հարություն Սինանյանի երգերով բեմ ելան առաջինը Փարիզի օփերայի հայտնի թենոր՝ Էջմիածնա նախկին սան Արմենակ Շահ-Մուրատյանը, իսկ երկրորդը՝ Փարիզի նորավարտ երիտասարդ երգիչ (պարիթոն) Թորգոմ Պեղոյանը, ապա տողերուս գրող նորավարտ դաշնակահարուհի Աղավնի Մեսրոպյանը...։

Հասավ համերգին դյութական բաժինը... Բացառիկ մեծությունեներուն տրված համեստությամբ մը, ինքը Կոմիտաս, հայտարարեց իր անունը և կատարելիք հայ ժողովրդական երգերուն անունները։ Կոմիտասի անունը տեղի տվավ երկարատև ծափահարությանց։ «Հորովելի», «Անտունիի», «Մոկաց Միրզա»-ի անմահ երգերը դյութեցին բազմահազար ժողովուրդը։ Կրկին որո-

տացող ծախսահարութիւններով Կոմիտասը նստավ այս անգամ դաշնամուրին առջև։ Այդ խորախորհուրդ և սրբազան ըսպին մարդկային վշտի, թախիծի պոռթկումներն էին, որ անմահ երաժշտին կոկորդն ըղեալով հոսեցին բազմահազար լսողներուն սրտերուն մէջ, կազմելով հայ ժողովրդի հոգւոյ հարստութեան ծովը...

Անչափ հուզական ու հետաքրքիր էր նուագելու նվագահանդեսին վերջավորութիւնը։ Պոլսո հայաշատ արվարձաններեն նվիրաբերված և դահլիճին չորս կողմերեն հանկարծակի արձակված սպիտակ ազավնիներուն երամները խելահեղ կերպով սկսան Թրաչկոսիլ ամեն կողմ...

Գուշնզուլյն ծաղիկներ ծածկեցին բեմը, և ժողովրդի չդադրող ուռաներու և և ճավերմ կեցցե Կոմիտաս վարդպետ բացականչութիւններուն մէջ, Քըթի-Շանի վարագույրը փակվեցավ։

Կոմիտասի պոլսական կյանքին մէջ հիշատակելի են իր մտերիմ ընկերներուն հետ հաճախակի կազմակերպած ուսումնասիրական պտույտները։

Արվեստի կոթողներ, պալատներ, մզկիթներ, զորանոցներ... դարերե ի վեր կկրեն հայ անմահ արվեստագետ հաստատարարներ՝ Պալյանները, Տաթյանները և Սինանները և անոնց հաջորդներու անջնջելի կնիքը...։

Կոմիտասի ամենասիրած ընութիւնն վայրերը կհանդիսանային Մարմարայի կապտագեղ ջուրերուն վրա նստած Իշխանաց կղզիները, որոնց արևավառ ժայռերուն վրա կերգեր նա իր ընկերներուն հետ։

Հաճախ ալ, ամառային կիրակի օրերուն, Կոմիտասի ամենամեծ հաճույքը կկազմեր շոգենավային պտույտներ կատարել Վոսփորի մեկ ծայրեն միւսը իր ընկերներուն հետ։ Ի հիշատակ այդ անմոռանալի օրերուն, խումբին միայուն նկարիչը Փանոս Թերլեմեզյանը կտավին կհանձներ ընութիւնն տեսարանները...

Նման օրերեն մեկը, երբ ես երաժշտան դասավանդութիւնս առիթով կամուրջեն դեպի Գեոյուքտերե (Վոսփորի Երոպական ափին ծովափնյա գյուղ) կերթայի, նույն շոգենավին մէջ հանդիպեցա սիրելի ծանոթ դեմքերու՝ Կոմիտասին, Սիամանթոյին, Մանրիկ և Շահան Գերպերյաններուն և Փանոս Թերլեմեզյանին, որոնք շոգենավին ցուռկին վրա տեղավորված, իրենց խնջույքի ծրարները բացած էին։ Նկարիչ Փանոս Թերլեմեզյանը իրմե անբաժան նկարչական տուփը բանալով մինչև մեր Գեյուք Ծերե հասնելը, այդ խումբը նկարեց։

Երևանի մեջ, 1931 թվականին սկսյալ երկար տարիներ, ամեն անգամ հանդիպումներուս առեն, նկարիչ Փանոս Թերլեմեզյանը խոստացավ իրը հիշատակ նկար մը նվիրել ինձ։ Ես խնդրեցի իրմե միայն և միայն Վոստորը շոգենավին մեջ, իմ աչքերուս առջև իր նկարած այդ խմբանկարը։ Ձերը նոր բնակարան ստանաս, անոր պատեն պիտի կախեմ ձեռքովս»—ըսավ նա վերջին անգամ։

Բայց, ով մեծ զարմանք և հուսախաբություն։ Երբ Երևան «Ինտուրիստ» հյուրանոցի նկարիչին աշխատանոց բնակարանին մեջ, իմ ներկայությամբ, այդ այնքան սիրած կոմիտասյան խմբանկարը Թերլեմեզյանը ընծայեց բանաստեղծ Եղիշե-Չարենցին. (որ նույնպես տարիներե ի վեր ջերմ երկրպագուն էր դարձեր այդ խմբանկարին, բանաստեղծը նույն վայրկյանին երախտագիտության զգացումով մը համբուրեց նվիրատու նկարչին ձեռքը և ապա անոր ճակատը։ Իսկ ես այդ զեղեցիկ և հազվագյուտ նկարին հիշողությամբ մը միայն հեռացող, կգերսեմ այն անհայտին (որուն ձեռքն է այժմ նկարը)՝ որ իր մոտ պահած համայն հայության համար այդ թանկագին հիշատակը, իր ցանկացած ձևով հանձներ մեր պետական-նկարչական թանգարանին, իբրև անգին նմուշ մը Կոմիտասի գիտակցական կյանքին վերջին տարիներեն։

## ԿՈՄԻՏԱՍ՝ ՐՈՒՄԵԼԻ-ՀԻՍԱՐԻ ՇԵՅԻՏԼԻՔԻՆ ՄԵՋ

Գեղաջիջաղ Վոստորի եվրոպական ափին հանդչող Ռումելի-Հիսար գյուղը դարերե ի վեր կնատանդվի իր ամրակուռ պարիսպներով և աշտարակներով, որոնք շինված են Գոլիսը առնող Ֆաթիհ Սուլթան Մեհմետի կողմե։

Ռումելի Հիսարը բացի պատմական անցյալ մը ունենալե, իր Շեյխուլիք կոչվող մենաստանով, ուր տերվիշներ կը բնակին, անվանի է դարձած նույնիսկ զրոսաշրջիկներու ուղեցույցներուն մեջ։

1912-ին ամառը օր մը երիտասարդ նկարիչ ընկերոջս Զարեհ Գալֆայանի հետ (ներկայիս նկարիչ ի Փարիզ) բարձրացանք Շեյխուլիքի գագաթը։

Վոստորի համայնապատկերով զբաղված եինք, երբ հանկարծ մեր ականջին հասավ սրինգի մի ձայն։

Հետզհետե պայծառացող ախորժալուր եղանակը, պատանեկա-



A 2979



Ռումելի-հիսար—«Շեյիտլիք»

կան թարմ հիշատակի մը օգնությամբ, առջև բերավ տերվիշ Բուհին։

Կանաչազարդ, ծաղկավետ մարգագետիններով մոտեցանք մեղ կախարդող երաժշտության։

Այդտեղ տեսանք նկարչական հսկա հովանոց մը, որուն շուքին տակ նստած գտանք նկարիչ Փանոս Թերլեմեզյանը։

Ավելի ուրախացանք տեսնելով բավականին հեռու, ծառի մը տակ նստած Կոմիտասը, որ կունկնդրեր իր քովը ծալապատիկ նստած սընդահարը։ Այս վերջինը տերվիշական բարձր և կոնաձև գլխանոցին զատելով Շեյխալիքի վանականներեն մեկն էր։

Թերլեմեզյանը մեղի ըսավ հետևյալը. «Վերջապես Կոմիտասը այսօր հասավ իր մուրազին։ Այս առաջ որոշեցի առաջին շաբաթվով Բումելի-Հիսար նկարելու գալ Կոմիտասը ինձի միացավ այն վստահությամբ, որ Շեյխալիքի մենաստանին մեջ պիտի կրնար ծանոթանալ հայանի սընդահարին։ Շեյխալիք հասնելուս՝ մեծ ու փոքր տերվիշներին շրջապատվեցանք։ Կոմիտասի համբավը մեղ արժանացուց հյուրասիրական մեծ պատիվներու։

«Շեյխալիքի մենաստանի մուտքի հայրենի աղբյուրեն պապակնես հագեցնելե վերջ հյուրասիրվեցանք սուրճով և շերբեթով։ Ներկա եղանք տերվիշներու առավոտյան արարողության, որ կը կատարվեր արաբական և պարսկական երաժշտությամբ։

«Երաժիշտներուն մեջ ամենեն ավելի Կոմիտասը հետաքրքրեց հայանի սընդահար Բուհին, որը նամազը վերջացնելեն հետո սիրահոժար իր ժամերը տարամադրեց համբավոր հայ երաժշտագետ-երգիչին։

«Կոմիտասը հետաքրքրվեցավ արաբական և պարսկական երաժշտությանց՝ հայ եկեղեցական երաժշտության վրա ունեցած ազդեցությունով..»

Երբ հասանք Կոմիտասին և տերվիշին մոտ, Կոմիտաս սընդգը ձեռք առավ և սկսավ նվագել «Լաւ-դա-լուր»-ը, հուզելով ամենքս։

Կոմիտասին տաքերուն մոտ գլխիկոր և կծկված կունկնդրեր Բուհին։

Երբ «Լաւ-դա-լուր»-ը վերջացավ, տերվիշ Բուհին տեղեն ցատկելով, երկու ձեռքերը կուրծքին արտասավելով խոնարհեցավ Կոմիտասին առջև ու զովեց հայ ազգը այդպիսի Աստվածատուր որդի մը ունենալուն համար։

Երբ Թերլեմեդյանի խնդրանքին վրա Կոմիտասը երգեց «Մոկաց Միրզան», քիչ հետո մեր շուրջը տեսանք նորեկ խումբ մը, հայ երիտասարդներ, որոնք Շեյխալիքի զրացի ամերիկյան Բոբերտ-Գոլեճի աշակերտներն էին։ Բուհին, որ պահ մը հեռացած էր, այդ միջոցին վերադարձավ, պղնձյա խոշոր աման մը լեցուն սև և սպիտակ թութ բերելով։ «Շեյխ Կոմիտասին արժանի ոչինչ ունիմ հրամցնելիք, բացի իմ ձեռքերովս հասունցուցած թթենիներուս առաջին բերքեն»։

Բոլորս հավաքվեցանք մեծ երաժշտագետին շուրջը և անոր սրամիտ կատակներուն հետ կերանք մեղրահամ սև և կարմիր թութը։ Երեկոյան, Շեյխալիքի բարձունքեն տեսանք Գեյքզեն դեպի Բումելի-Հիսար ժամանող շոգենավը։ Սրնգահար Բուհին կրկին խաչաձևելով իր ձեռքերը, զլուխը խոնարհած հրաժեշտ տվավ Կոմիտասին, մաղթելով անոր երկար կյանք և կրկին տեսություն։

Անմոռանալի Կոմիտասը Զարուքը հասնելնուս, իր ամենասիրած գյուղի գեղեցկությանց դիմաց լեռնոտ շնչելով, ըսավ. «Այս օրն ալ իր հիշատակով կմնա մեր սրտերուն խորը»։

## ԿՈՄԻՏԱՍԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՔԱՂԱՂԸ...

1912-ին Գոլոս ծովափնյա Գասը-գյուղը իր զարնանային ամբողջ գեղեցկությամբ կախարդեց երկու երիտասարդ նկարիչներս, Զարեհ Գալֆյանը և ես։

Իրիկնամուտի մը Գասը-գյուղեն վերջին շոգենավով մեկնեցանք Գոլիս։ Կամրջակին վրա անկյուն մը տեղավորված ենք, երբ հանկարծ լսեցինք շոգենավի ցառուկին բարձրացող ծանոթ ձայն մը, որ մեզ կը կանչեր։ Կոմիտասն էր՝ շրջապատված իր ամենատենդան ուղեկիցներով։

Խումբը բաղկացած էր պոլսահայ հայտնի մտավորականներե և արվեստագետներե, որոնք կվերադառնային Ֆեներ-Գահչեի Զիֆթե-Հավուզ կոչվող զբոսավայրեն։

Իրենց խոսակցության նյութն էր Զիֆթե-Հավուզին մեջ գտնվող հաղվագյուտ գեղեցկությամբ պալատական աթոր մը, որուն կանչերեն ազդված էին։ Խումբի երեք հայտնի երաժշտագետ երգահանները՝ Հարություն Սինանյան, Դ. Դավիթյան և Էտկառ

Մանաս, որոնք պատահմամբ Զիփթե-Հավուզին մեջ Կոմիտասյան խումբին էին հանդիպել, առանձին-առանձին պատկերացուցին օրվան իրենց երաժշտական ներշնչումները, զանոնք կապելով սիրային ռոմանսներու, արևելյան միստիցիզմի և բնության վայելքի տպավորությանց հետ։

Կոմիտասը չժխտելով Զիփթե-Հավուզի «սալատական աքլորին» գեղեցկությունը, ավելցուց, որ անոր օտարոտի կանչերը հոգվույն ոչինչ չխոսեցան, միայն արծարծեցին իր հայրենի աքաղաղին անհուն կարոտը։ Մեծ երաժշտագետը իր հայացքն ուղղելով երեք երաժշտագետներուն, ըսավ. «Իմ սիրելի դժբախտ հայորդիներ, ուր էր, որ դուք այսօր տեսնեիք ձեր հայրենի աքաղաղը... այն հայրենի աքաղաղը, որ իր քաղցր կանչերով, Էջմիածնա վաղ ուսանողական տարիներես, հայրենի սերուցս հիմքը դրավ. Ո՞ւր է, ուր է հայրենի հողն ու ջուրն սնած իմ աքաղաղը, պիտի տեսնեմ, պիտի լսեմ դարձյալ զայն... Ա՜խ, իմ հայրենի աքաղաղը, որ օրն ի բուն դեգերելով փլատակներու, դարավոր վանքերու բակերուն մեջ, կամ գլղլացող առվակներու եղեգները, վաղ արշալույսեն մինչ երեկո, իր զիլ կանչերով հոգվույս մեջ ամբարեց հայ ժողովուրդին անհուն ապրումները։ Ախոռ, որ ձեր հոգվոն ականջները տակավին օտարոտի կանչերով ձեզ կոգևորեն...»։

Մթագնած իրիկունով հասանք Կալաթայի կամուրջը։ Տար ըսպե հետո Կալաթայի թյունելեն Կոմիտասյան խումբը ուղևորվեցավ դեպի Բերայի երկաթձիգ պտոտան, որուն քովնտի փողոցներուն մեջ հետզհետե ցրվեցան անոնցմե շատերը։

Իսկ մենք հասանք Թաքսիմի հրապարակը։ Երբ Կոմիտասը իր անբաժան ընկերոջ՝ Փանոս Թերլեմեզյանի հետ մեզ հրաժեշտ տվավ, և սրտե մաղթեց, որ մենք արժանի ըլլանք օրին մեկը տեսնելու մեր հայրենի հողը իր հայրենի աքաղաղով...»։

## ԿՈՄԻՏԱՍԸ ԽՈՐԵՆ ԷՖԵՆՏԻ ԽՐԻՄՅԱՆԵՆՑ ՏԱՆ ՄԵՋ

Իմ երաժշտական դասավանդության սկզբնական շրջանին Կոմիտասի միջնորդությամբ սկսա դասավանդել հորս Էջմիածնա վաղեմի մտերիմ՝ Խորեն Էֆենտի Խրիմյանի երեք օրդիներուն, Կարինեին, Սերինեին և Շուշիկին։

Կոմիտաս, իբրև Արիմյան ընտանիքին մեկ հարազատը, մեծ նախանձախնդրությամբ կհետևեր օրիորդ Արիմյաններուն երաժշտական կրթությանը։ Հաղիվ տասնըհինգ տարեկան Շուշիկ, բացի իր դաշնամուրային շնորհին, ցույց տվավ նաև հայկական ժողովրդական երգեցողությունն ըմբռնելու ընդունակ։ Եվ Կոմիտասի հոգատար ջանքերով քանի մը ամիսներ դեռատի Շուշիկը զարձավ անոր Պոլսո առաջին հրապարակային համերգներուն փընտրված մենակատարուհին։

Վանեցի Որբն էֆենտի Արիմյան, եղբորորդի և հոգեորդի Արիմյան հայրիկի, մեծ հարգանք կվայելեր պոլսահայության լայն խավերին։

Անոր Բերա-Բանկալթիի տունը այն նահապետական օճախն էր, որ անեղծ կերպով կպահպաներ հայ գավառական կյանքին նիստ ու կացի բարքերն ու սովորությունները։

Այդ հարկին տակ ես ծանոթացա գավառացի հայանի գրողներու, հայրենասերներու, մտավորականներու, ինչպես նաև էջմիածնական բանասեր կրոնականներու և հայ խոշորագույն արվեստագետներու, որոնց առանցքը կկազմեր մեր սիրելի Կոմիտասը։

Կոմիտաս վարդապետի Պոլսո մեջ ունեցած մտերիմ ընտանեկան շրջանակները հարյուրներու կհասնին, սկսյալ իշխանական, մեծահարուստներու ապարանքներեն, մինչև համեստ մտավորականի և արհեստավորի տուները։ Սակայն անոնց մեջ ամենահիշատակելին կմնա Որբն էֆենտի Արիմյանենց տունը, որուն ընտանիքին մեծ ու փոքր անդամները, դեռ էջմիածնեն Կոմիտասի մտերիմներն էին։

Նման առիթներով Արիմյանենց տունը կհավաքվեին իրենց հայրենակիցներեն և Կոմիտասի մտերիմներեն Թերլեմեզյան Ոհանեսս և Նշան եղբայրները, իրենց ընտանիքի անդամներով, նույնպես խիստ հաճախ Իսաղուլյան և Ալեմյան ընտանիքները, ինչպես և բժշկական ուսանող վանեցի երիտասարդ Հայկ Գալճյանը, որ Կոմիտասի և Որբենի շատ սիրելին էր։ Միշտ ներկա էր Կոմիտասի անբաժան ընկերը, նկարիչ Փանոս Թերլեմեզյանը։ Ներկաները իրենց անցյալ օրերու հուշերը կը պատմեին ճաշի ընթացքին և ես մեծ հետաքրքրությամբ կը լսեի զանոնք։ Այդ հուշերեն մեկ քանին, որոնք խորապես տպավորված են մտքիս մեջ։ գրի պիտի առնեմ իրենց կարևորության պատճառով։

1893-ին Էջմիածնա մեջ կաթողիկոսական ընտրություն կը կատարվեր բազմաթիվ վայրերե հասած պատգամավորներու կողմե։ Քանտիաներն էին Արիմյան հայրիկը և Օրմանյանը։

Վանքի բակին մեջ, տասնյակ հազարավոր ժողովուրդ խըռնված, սրտատրոփ կսպասեր օրվան կարևոր լուրին...։

Երիտասարդ Կոմիտասը, որ վանքի ներքին պատերուն մեջ փակված էր, ընտրության արդյունքը լսելով թղթիկի մը վրա հետևյալը կը գրեև կը նետե դուրսը դանվող ժողովուրդին.

«Էջմիածնում, յոթանասուն երկու տարեկան հասակում, յոթանասուն երկու քվեով կաթողիկոս ընտրվեց Արիմյան հայրիկը՝ որով կաթողիկոսական հարցը լուծվեց ի նպաստ Հայրիկի...»։

Ժողովուրդի մեջ կիյնա անկարագրելի իրարանցում, գոռում գոչում, Օրմանյանականները բռունցքներով և գավազաններով կը հարձակին Արիմյանականներու վրա։

Ուշ երեկոյան, երբ Օրմանյանական եպիսկոպոս մը կմտնե միաբանության խուցերը և կսկսի մեղադրել եկեղեցական օրինականությունը զանցառող իբրև անծանոթ միաբանին, երիտասարդ Կոմիտասը ժպիտը երեսին կը բացականչե. «Սրբազան հայր, ժամ առաջ ուզեցի փրկել Արիմյանականները, որոնք ինձ նման հայ ժողովուրդի ճշմարիտ շանը կղանանջելին այսօր...»։

Դարձյալ Կոմիտասն էր, որ պատմեց հետևյալը.

«1903-ին Էջմիածնա վանքին միաբանության նախանձոտ աչքերուն տակ, վեհափառ Հայրիկի առաջարկով, ես շաբաթը երկու անգամ սկսա երաժշտություն ավանդել իր թոռնիկներուն, Խորեն էֆենտի Արիմյանի երկու դեռատի աղջիկներուն—Կարինեին[1] և Սերինեին։

«Երկու աշակերտուհիներս քանի մը ամիսներու ընթացքին իրենց ընտանեկան շրջանակին մեջ, սկսան ազատ երգել «Հայաստան, երկիր դրախտավայր» և «Ձայն տուր, ով ծովակ», որոնք Արիմյան Հայրիկի նախընտրած երգերն էին։

«Էջմիածնա վանքի մեջ, երբ ծերունազարդ Արիմյան Հայրիկը իր ցավատանջ կյանքին անքուն գիշերներովը կտառապեր, իր երեք սիրելիները՝ Խորենը, Թերլեմեզյանը և ես հերթով կհսկեինք

---

[1]) Կարինե Արիմյանը, ներկայիս Կարինե Ալիկյան, Երևանաբնակ, եղած է Կոմիտաս վարդապետի 1-ին աշակերտը։

իր սնարին քով, երկար ժամեր պատմութիւններ պատմելով, զրուցներ ընելով կմեղմացնեինք իր ցաւերը։

«Պատկառելի հայոց Հայրիկը սովորութիւն դարձուց իր անձնական գինիի ամենօրեայ բաժինը նվիրել մեզ ըսելով. «Որդյակք սիրելիք, մի քաշվեք, իմ տեղն անուշ ըրեք Հայրիկին գինին»։

«Էջմիածնա վանքի այգիներին մասնավորապես վեհափառ Հայրիկի համար պատրաստված մարխոշ[1]—կարմրավառ գինին կարճ ժամանակվան մեջ կախարդեց մեր երեք ընկերներուն քիմքը։ Նույն օրերուն հեռավոր վայրերե եկող հյուրերուն համար ճաշ սեղան մը պատրաստված էր Խրիմյան Հայրիկի մոտ, որուն կսպասավորեի ես։

«Խրիմյան Հայրիկը նկատելով սեղանին դրված գինիին տարբեր գույնը և համը, մասնասպետը կանչեց զայրույթով և հրամայեց անմիջապես գինիի շիշերը իր անձնական պահեստին գինիովը փոխարինել։ Բայց որքան մեծ եղավ զարմանքը, երբ Վեհափառին ականջն ի վար շշնջեցի. «Փանոսն ու Խորենը Վեհափառ Հայրիկի գինվո տակառին վերջին մզուրն ալ քամեր են...»։

«Այդ օրը, ուշ երեկոյան, երբ ըստ սովորության երիտասարդ նկարիչ Փանոս Թերլեմեզյանը մտավ Վեհափառի սենյակը իր գիշերապահ—զրուցողի պաշտոնով, Հայրիկը իր թափանցող աչքերը ուղղելով անոր, ըսավ. «Ծո տղա, Փանոս, Եվրոպան քեզ աղել այլանդակեր է՝ նոր արվեստի մը կա տեր ընելով...» Նկարիչը կը պատասխանե «Վեհափառ տեր, նոր արվեստի յուրացումը Կոմիտասի և Խորենի վարպետությանը կպարտիմ»։

«Երբ ուշ գիշերին լուռ ու մունջ ներս կմտնեի Հայրիկին սիրած երգը շուրթերուս, ալեզարդ հայրապետը սնարին վրայեն աչքերը դեպի ինձ դարձնելով ըսավ. «Այ Կոմիտաս, ծո, տնաշեն տղա, աղվոր գինի ճնկելու արվեստը Պրուսայե՞ն մի հետդ բերիր...» Այն ատեն ես ալ պատասխանեցի. «Վեհափառ Հայրիկ, Հայաստանի անմահական գինին ընտրելու և անուշ ընելու արվեստը յուրացուցի մեր սիրելի Հայրիկեն...»։

Հավետ անմոռանալի կմնան նաև Խորեն Էֆենտի Խրիմյանենց «քարեկենդանյան» ճաշկերույթներուն հաջորդող այն գեղարվեստական ժամանցները, որոնց մշտական ղեկավարն էր Կոմիտասը։

Այդ մտերիմ շրջանակին մեջ Կոմիտասը կարելի էր ճանչնալ

---

[1]) Մարխոշ—թթվաշ։ Ծ. Հ.։

իր ամբողջ էութիւնամբ Անոր ծայրահեղ համեստութիւնը, բարեհամբաւութիւն, քաղցր ու անկեղծ ընավորութիւնը, մեծ ու փոքրին հանդէպ ցոյց տված սիրալիրութիւնը կդրավեին բոլորին սըրտերը։ Մեծ երաժշտագետ-երգչին ոգեորութիւնը իր գաղթականութեան կհասներ, երբ ծայր կառներ իր սկսած հայ ժողովրդական երգն ու պարը, սրնգային կամ ձայնական երաժշտութեան քաղցրահնչուն ծիանքներով ողողուն...,

Կոմիտասի բացառիկ վարակիչ ոգեորութիւնը զսպանակավոր պտուտակներու նման շարժման մէջ կդներ ներկաները երգ ու պարին մասնակից ընելով ամենամեծեն մինչև ամենափոքրը։

Նման երեկոներեն կը հիշեմ «Շորոր» հերոսական պարը, զոր կկատարեին Կոմիտասը և նկարիչ Թերլեմեզյանը։ «Շորոր» հայկական ժողովրդական պարին մէջ իրարու չզիջող երկու վարպետները ձեռքերնին մեկ-մեկ սուր բռնած, սկզբնական հանդարտ քայլերով, մարմնի ճոճումներով հզոր և վեհապանծ վերջավորութեան մը կհասնեին...։

Անմոռանալի էր նաև «Հոպ-հոպ» հայ ժողովրդական պարերը, զոր Կոմիտաս կերգեր բազմոցին վրա ծալապատիկ նստած։ Նա իր ոիթմիկ ծափերուն և երգին միջոցով կհրահրեր մանավանդ իրեն մերձավոր ընկերոջ՝ Փանոս Թերլեմեզյանի ոգեորութիւնը։ Այդ ուրախալի պարն ալ իրրև երեկոյան հրաժեշտի վերջին մասը, կվերջանար գինիի բաժակներով և Կոմիտասի հայրենասիրական մաղթանքներով։

1920-նոյեմբերին, Թիֆլիս բանաստեղծ Հովհաննես Թումանյանի տանը. (Վողնեսեսկի № 18), ներկա էին Հովհաննես Թումանյանը և իր ընտանիքը, նկարիչներ Գեորգ Բաշինջաղյան և Եղիշե Թաթեոսյանի տիկինը Ժիւսթին, բժշկապետ և նկարիչ Զարգարյանց։ նկարիչ Գրիգոր Շարբարչյան (Գիգո), ինչպես նաև երաժշտագետ Ռուբեն վարդ. Մանասյան և երեք Էջմիածնական արտասահման մեկնող առաջնորդներ։

Ասոնցմէ մեկուն, մեր վաղեմի բարեկամ Տիրայր եպիսկոպոսին շնորհիվ ես առաջին անգամ ծանոթացա Հովհաննես Թումանյանին և իր ընտանիքին։ Իրրև Պոլսեն նոր Կովկաս եկած, խընդրեցին պատմել Կոմիտասի մասին։

Կոմիտասը իր աքսորավայրեն վերադառնալեն քանի մը շաբաթ վերջ 1915-ի հուլիսի 14-ին, ներկա եղավ իր վաղեմի ըն-

վերներին մեկուն հարանիքին։ Իբրև հարսի դպրոցական ընկերուհի, հորս ալ ի պաշտոնե ներկա ըլլալուն, ես ալ օգտվեցա հանդամանքին...։

Նույն տարվան, ապրիլի 11-ին Պոլսո մեջ հարյուրավոր հայանի մտավորականներուն աքսորը և ապա անոնց հրեշավոր տանջանքներով խողխողվիլը, վատ տրամադրություն ստեղծած էր հարսանիքին մեջ, ուր, ինչպես ըսի, ներկա էր աքսորավայրերու դժոխային տեսարաններու ականատես Կոմիտասը։

Հարսին հայրը, Պոլսո մեջ քանի մը սերունդներ դաստիարակած հայանի դեղագիր-մանկավարժ Մինրան Տեոքմեճյանը, ի զուր հայրական քակը բացեր էր, իր մեկ հատիկ աղջկան՝ Նոյեմիին հարսնիքը շքեղ կերպով կատարելու...։

Այս օրվան պես թարմ կտեսնեմ այդ հարսանեկան օրը, մեր սիրելի և տարաբախտ Կոմիտասի նիստ ու կացի բոլոր մանրամասնություններով։

Պսակի արարողության մեջտեղին Կոմիտասը հարս ու փեսային և կնքահոր դիմացը, պսակիչ քահանային կողքին կանգնած, դեղին ծաղկավոր ոսկեթել շուրջառը ուսերուն, ավետարանը ձեռքերուն մեջ բռնած կկարդար իր քաղցր ձայնով։

Պսակի արարողությենեն վերջ, կհիշեմ իր թախծոտ դեմքին արտահայտությունը և իր փայլող սև, խոշոր աչքերը...։

Այդ հարսանիքին սակավաթիվ հրավիրյալներու մեջ էր նաև Պոլսո «Բյուզանդիոն» օրաթերթի խմբագրապետը Բյուզանդ Բեկյան, որ Կոմիտաս վարդապետին հետ նոր էր վերադարձած աքսորավայրեն, և իրար «Դողդոջա բարձրացող եղբայրներ» կանվանեին...։

Հյուրասրահին մեկ անկյունն դրված էր Նոյեմիի դաշնամուրը, որուն ձեռք չդիպցուց Կոմիտասը։ Բայց առաջարկեց երիտասարդ նվագողներուս և հարսին երաժշտության դասատու խոլացի Ռոմանոյին, որպեսզի քանի մը դասական գործեր նվագենք։ Կոմիտասը դաշնամուրին քով նստած, մեր նվագը մտիկ ընելե և վարկյան մը խորհելե վերջ, հայտնեց, որ Պախի և Հենդելի երաժշտության հանդեպ մասնավոր սեր ունի։ Հետո կարծես երազե մը սթափելով ավելցուց. «դասական երաժշտությունը շատ աղդեց վրա...»։ Հետո սկսավ տխուր շեշտով մը պատմել աքսորավայրին մեջ տեղի ունեցած հետևյալ դեպքը «Զանկրիի բանտին մեջ»

թյուրք ժանդարմայի մը հսկողության տակ, անոթի և ցրտահար բաղդակցներս կողք կողքի կմղկտայինք և կսպասեինք ահավոր բաժանման։ Ես երգի մը միջոցով հայտնեցի միաքս մեզ սպառնացող մոտալուտ բնաջնջման մասին։ Այդ պահուն թուրք ժանդարմը անհասկանալիորեն ետևս մոռնալով հանկարծակի երեսիս ապտակ մը հասցուց... Կըսեն թե ժամանակը կդարմանե ամեն վիշտ, բայց այդ վայրենի ժանդարմին հասցուցած նախատինքը երբեք պիտի չկրնամ մոռնալ..»։

1915-ի հուլիսի 14-ին, այդ հարսանեկան օրը Կոմիտասի գիտակցական կյանքին վերջին օրերերեն մեկն էր։ Միայն հարսանեկան սեղանին շուրջ քիչ մը ոգևորվելով երգեց, «Կռունկ», «Մակաց Մերզեն», «Հորովել» երգերը և ատոնք Կոմիտասի ներքնաշխարհի ալեկոծությանց արտահայտությունները եղան։

Այդ օրը նա այլևս ուրիշ Կոմիտաս էր։ Ներվանեբուն կըմոխանցեր իր կրած մղձավանջին սարսափը, որ գիշեր ցերեկ վինքը հալածած էր։ Իր երգած երգերը 1915-ի թյուրք ռեժիմին մահաբեր ճիրաններուն տակ խողխողված իր նահատակյալ ընկերներուն թախիծովը լեցված էին։

Այդ հիշատակելի գիշերեն քանի մը շաբաթ վերջն էր, որ հայրս միջօրեի մը տուն մտնելով, հայտնեց Կոմիտասի հոգեկան ծանր տագնապներու մասին, որոնք տեղի էին ունեցեր գիշերվան 12-էն սկսյալ մինչև առավոտյան 5-ը...։

Տարաբախտ Կոմիտաս վարդապետի տան անմիջական դրացի Հարենց ընտանիքը, գիշերային խոր լռության մեջ, իրենց ննջասենյակի կից պատեն, ժամերե ի վեր լսած էր անոր պոռչտուքը և դաշնամուրին թափահարումը։ Մոհարարը նունյպես լսած էր գիշերային անսովոր աղմուկը և լուր տված էր Կոմիտասի աքսորի ընկեր բժիշկ Վահրամ Թորգոմյանին։

Այդ գժբախտ լուրը ցնցեց ամբողջ պոլսահայությունը։ Ուխտաստեղի մը դարձավ Կոմիտասի երեք հարկանի բնակարանը, որուն օր ու գիշեր Բանկալթիի հնադարյան ազգ. գերեզմանատան վրան նայող պատշգամին պատուհանները փակված կը մնային։ Թափուր մնաց և այն անկյունը, ուր դարձանային և աշխանային ուսածագերուն նա անչափ կսիրեր նստել Թոչնոց գայլայլիկները լսելու...։

Անզուգական Կոմիտասին պատահած հանկարծակի գժբախ-

թության պատճառը, պոլսահայ և օտարազգի բժշկապետներու կարծիքով նույնն էին, անոնք մխաբերան աքսորի տեղն ու սարսափը կպատճառաբանեին։

Անհերքելի է, որ աքսորի տառապանքը զինքը հանկարծ զգետնեց և իր հոգեկան տագնապները առաջ եկան աքսորեն անմիջապես վերջը։

Այդ նույն թյուրքերը, որոնք տարիներով զինքը գովաբանեցին, հարգեցին և մամուլի էջերով պանծացուցին իբրև հայկական արվեստի մեծ վարպետ, սակայն երբ կարգը հայ ջարդելու եկավ, ամենայն պաղարյամբ աքսորի և ջարդելու ղրկեցին զինքը։ Այդքանն ալ չբավեց, թուրք մտավորականներ, որոնք միևնույն կեղծավոր փառաբանիչներն եղած էին, օգտվելով իրենց սարքած հավոր ջարդերեն և ղրամատիրական մեղսակից տերությանց քաջալերանքեն, ուղեցին հայ ազգին մշակույթն ալ սպանել, ինչպես սպաննած էին մարմինը։

Անհավասիկ ուրիշ վկայություն մը կա, թե ինչպես ջարդարար սուլթանական թյուրքիան ուղղակի պատճառ դարձավ Կոմիտասի հոգեկան փլուզումին։

«Ենկյուրիի երկաթուղային կայարանն կիջնենք։ Բանի մեր ճամբան կշարունակենք և մարդաբնակություններն կը հեռանայինք, այնքան մեր հոգիները կկոսովեին և մեր մտքերը չարագուշակ մտածումներով ինքնալլկուռի կենթարկվեին։ Զի ամեն ապառաժի և ամեն ծառի ետև պահված ավազակներ տեսնել կկարծեինք...։ Հայ ժողովրդի շինական երգերու անդուգական վարպետ Կոմիտաս, որ մեր կարգին մեջ կգտնվեր, արդեն մտքի տարբերնակ տրամադրություններ կը ցուցներ և հասատամատ ծառերը շարժուն և հարձակող ավազակներ կարծելով միշտ իր գլուխը վերարկուին փեշերու ներքև կջանար թագցնել, որսորդի երկյուղեն ավազի տակ գլուխը թաղող կաքավներու նման։ Կթախանձեր, որ պահպանիչ ըսեմ իր գլխուն վրա, հուսալով վերադառնել իր խռովահույզ հոգին հանդարտությունը։[1])»

«Երբ Կոմիտաս վարեապետը սկսավ իր մելամաղձոտ և սրտառուչ «տեր ողորմյան», ծայը առավ հեկեկանք մը ամեն կողմեն,

---

[1]) «Հայ Գողգոթան», հեղինակ Գ. Պալաքյան, Վիեննա-Մխիթարյան տպարան, 1922 թ.։

որը հնար չէր զսպել։ Կուլայինք ամենքս ալ տղու պես. կուլայինք մեր ձգած սիրելիներուն վրա, կուլայինք մեր ճակատագրին վրա, կուլայինք մեր ազգին անբախտության վրա, կուլայինք անցուցած մեր արյունի օրերուն վրա, առանց ենթադրելու թե արյան աշխարհավերջ աննախընթաց նոր փոթորիկներու արդեն նախօրյակին կը-գտնվինք, երբ սուլթանական Տաճկաստանը՝ մեր դարավոր թշնամին պիտի փորձեր ի մի հարված բնաջնջել մեր ազգը և հայրենիքը։ Մեր մեջեն ամենաքարացյալ սառնասիրտներն իսկ կմասնակցեին այս ողբ ու կոծին, որ երբեք բռնաղբոսիկ չէր, ընդհակառակը, հակառակ զսպումի ամեն ճիգերու, կուգար մեր տանջված հոգիներու խորքերեն և հուզումի պոռթկացող ներքին հորձանքներեն։ Թերևս տարաբախտ Կոմիտասը իր ամբողջ կյանքի մեջ այսքան հուզիչ երգած չէր երբեք «տեր ողորմյան»։

## ԿՈՄԻՏԱՍԸ «ԳԱՌԱԳԵՂԻ ՊՈՂԱՋԱՃԻ»-ԻՆ ԽԱՆՈՒԹԻՆ ՄԵՋ

Պոլսո ընտիր խմբերեղենաց հիշյալ համբավավոր խանութը կգտնվի Պոլսո կամուրջին Ղալաթիո կողմը։ Ըստ մեր մեծերուն պատմածներուն, այս խանութին տերերը սերունդե սերունդ, մեծ հարստությանց էին տիրացած։

Գառագեղի Պողաջաճի խանութին մեջ սովորություն դարձած էր ծանոթներու հանդիպումը և զիրար հյուրասիրելը։

Հիշյալ խանութին մեջ երբեմն կպատահեի Կոմիտասին և իր սովորական ընկերակիցներուն։

Խանութին տերը, Ալի-աղա, Կոմիտասը կճանչնար և կը-պատվեր։

1913-ին Պոլսո մեջ թյուրք-պուլկար պատերազմին շշուկները, ինչպես միշտ, դարձյալ պատճառ ստեղծեցին թյուրք արյունարբու կառավարությունը առամ կրճատացնել պոլսահայության դեմ։ Այդ օրերուն Կոմիտասի աննկուն կամքով կրկնապատկվեցան զուսանեղբչյանց համերգները, որոնք տեղի կունենային թե Բերայի սրահներուն և թե Շահնազարեան Պաշիի (նախկին Նայումի) թյուրքական թատրոնին մեջ։ Այդ վոանդավոր օրերեն մեկը, երբ դեպի Վոսֆորը երաժշտարան դասավանդության կերթայի, պերճիքացի ընկե-

բուհիս հետ Գառագեղի Պողոջամիի խանութին մէջ պատահեցանք Կոմիտասին և իր ընկերներուն։ Այս անգամ փոխանակ սեփականատիրոջ Ալի-աղայի, անոր տղան՝ եվրոպականացած արտաքինով Զեբի պէյը զայն դիմավորեց և շողոքորթական բարևներով անոր որպիսութիւնը հարցնելէ վերջ ավելցուց, որ Շանղեան Պաշիի լսած գուսան երգչախումբին համերգը անմոռանալի և գեղեցիկ տպավորութիւն ներգործեր է իր վրա և մեծ երաժշտագետ Շեհիա Կոմիտասին հետ այս անակնալ հանդիպումը ասոմածային շնորհք մը համարելով, կինդրեր Կոմիտասին, որ այդ օրը ընդունի իր հյուրընկալութիւնը։ Զեբի պէյի հրամանով, խանութին սպասավորները ծրարներ պատրաստեցին Կոմիտասին խումբին համար։ Բայց Կոմիտաս մերժեց եղած նվերը և ըսավ. «Զեզ գմայլեցնող երգերը հայ ժողովուրդին սեփականութիւններն են, ոչ թե իմ։ Անոնք թող սեփականութիւն դառնան նաև աշխարհիս այն ազգերուն, որոնք ի սրտե գնահատել հայ զարավոր ժողովրդին ստեղծագործական կարողութիւնը։ Թող ամէնուն այն մարդիկ, որոնք հայուն նման ազգ մը կնայածեն...»։

## ԿՈՄԻՏԱՍ ՊԱՐՏԻԶԱԿԻ ՄԷՋ

Պոլսաներգ Պարտիզակը Նիկոմիդիոյ ծովախորշին դիմ հանդիման կանգնած ընութիւնն լիաստ բարիքներով շենցած գյուղաքաղաք մըն է։

Ծովանայաց Պարտիզակի երկու հազար տուն բնակչութիւնը միայն հայերե քաղկացած ըլլալով, կիշխեր Հայդյուղ։ Հակառակ թրքական գավառակ մը ըլլալուն, անոր հայ բնակչութիւնը անեղծ կերպով կպահպաներ իր նախնյաց բարքերն ու սովորութիւնները։ Առանձին բարքարին հետ ուներ իր տարազը։

1912 թվականեն սկսյալ Պարտիզակի պետական պաշտոնեութիւն և գավառապետին հայ նշանակիվեր ուզեցեր պոլսահայութիւնը։ Այլևս Պարտիզակ հայ գյուղը դարձավ պոլսահայերու նախընտրած ամառանոցը։

1913-ի ամրան, Կոմիտաս վարդապետը իր քանի մը ընկերներով Պարտիզակի մէջ իջևանեց իր վարձի բարեկամին (հայր



Իզմիտի ծովախորշը

Արսեն Ղազիկյանի[1]) մոտ Ամեն օր վաղ առավոտյան, Պոլսեն ա-մառանոց եկող մասավորակներ, արվեստագետներ, բարձրագույն վարժարանի ուսանողներ, «Գուսան» երգչախումբին աշակերտնե-բեն շատերը իրենց ընտանիքի անդամներով, օրվան ուտելիքնին շալակած կաճապարեին դեպի Լուսաղբյուրի հաստատված ընկու-զենին, միանալու իրենց սիրելի երաժշտագետ-երգիչ Կոմիտասին։

Պարտիզակի Հայր Արսեն Ղազիկյանի շնորհով մեծ երաժշ-տագետը շատ շուտ ընտելացավ դարավոր անտառներուն, բար-ձրաբերձ դալարագեղ սարավանդներուն, հորձանուտ ջրվեժներուն և ձորերուն մեջ հրաշքի մը պես բացվող զմրուխտագեղ մարգա-գետիններուն։

Կոմիտասը գիտեր թե օրավան որ ժամերուն, որ զրոսավայրն ուներ իր բացառիկ հմայքը։

Ինչ անմոռանալի պատկեր էր, երբ ամեն առտու, Լուսաղ-բյուրին մոտ երկսեռ մանուկներու և երիտասարդներու խումբեր մեկզմեկու հետ մրցելով առաջինը կվազեին իրենց սիրելի Կոմի-տասի աջը համբուրելու Կոմիտասը, թևանցուկ իր սիրելի հայր Արսեն Ղազիկյանին ու Ռուբեն Զարդարյանին և շրջապատված իր ընկերներով, կերթար Դեղին աղբյուրը։ Այնտեղ կարմրավաղ գետնաբուխ աղբերակին շուրջ, մեծ երաժշտագետը ճարպիկորեն ոստնելով ալյուսաշաղախ մամռապատ քարերեն, իր ձեռքի թաղթե բաժակներով իբրև «անմահության ջուր», կատակելով ա-ռաջինը կխյուրասիրեր հայր Արսեն Ղազիկյանը։

Կոմիտասը հիշյալ աղբյուրի հանքային ջուրին գովքն ընե-լով կը գրգռեր մեծ ու փոքրին ախորժակը։ Իսկ երբ երիտասարդ աղջիկներեն այդ հանքային թթու ջուրը խմած ատեն գեմքի ծամածռություններ կընեին, երաժշտագետը սրամտությամբ անոնց կըսեր։ «Այս ջուրեն խմողը Հայաստանի աղջիկներուն նման հա-վիտենապես կարմրավառ շուրթեր և այտեր կունենա...»։

Երբ «Դեղին աղբյուր»-ին խումբը կթեքվեր դեպի «Ցատկան Ջուր»-ին պտղալի արահետները, Կոմիտասի առաջարկին վրա երկսեռ երիտասարդությունը մրջյուն մեղուներու նման թուփե թուփ ոստոստելով կքաղեր ծաղկանց և հյուսթեղ դաշտային պը-տուղներու տեսակները... Եվ բաղդավոր կհամարվեր այն զույգը,

---

[1]) Հայր Արսեն Ղազիկյան-Վենետիկի Մխիթարյաններեն, հայանի բանասեր և թարգմանիչ, ծնված Պարտիզակ Ծ. Հ.



Պարտիզակ — «Վերին արտեր»

որ ամենեն շուտ կհրամցներ իր պաղալից դամբյուղը Կոմիտասին և անոր ընկերներուն։

Դաշտային կիզիչ արևին տակ ճամբուն տարտուղը շատ շուտ կը փարատեր Կոմիտասի կատակներով և երգերով. կը հասնեինք «Ցատկան ջուր»-ի ձորը։ Այնտեղ, ջուրերու ձայնին հետ, կլսեինք թուփե թուփ թռչող մեղ ծանոթ թռչուններու երգը։

Ըստ Կոմիտասի արտահայտության, Պարտիզակի «Ազգային Հանրապետության» գրոսավայրերուն թագուհին կհանդիսանար «Ցատկան ջուր»-ի ձորը։ Անոր բուսական դեղեցկության հետ կը մրցեր իր հոյակապ ջրվեժը։

«Ցատկան ջուր»-ի ահեղաղղորդ փրփրան ու սպիտակ ջուրերը եռզհետե պրիսմակի բոլոր գույներն ստանալով, կը հոսեին ավազանման փոսերու մեջ, ուր առանձին հորձանքներով կբաժնվեին տարբեր ուղղություններու...։

Շատ քիչերն էին, որ արհամարհելով վտանգը, կը մագլցեին անոր մամռապատ հսկայակույտ քարերն ի վեր։ Անոնցմե առաջինն էր Կոմիտասը։ Այդ տեղն Կոմիտասի երգած «Հայաստան, երկիր դրախտավայր» երգը կը տարածվեր դեպի հեռավոր դաշտավայրերը, ուր ցորենի կալերուն մեջ աշխատող հայ շինականը, գերանդին և մանգաղը թողած, կորոներ հրաշալի երաժշտության աղբյուրը...։ Երիտասարդությունը խումբերու բաժնված «Ցատկան Ջրվեժ»-ին շուրջը ժրաջան մրջյուններու պես աշխատանքի կլլծվեին։ Շատեր դաշտասեղանի պատրաստությամբ կզբաղվեին։ Ուրիշներ խարույկներ կը վառեին։ Մեկ քանի նկարիչներ ալ, որոնց մեջ տողերս գրողը, «Ցատկան Ջրվեժ»-ին դիմացը նստած կը նկարեին։

Երբ մեր խումբը լուսնի առաջին շողերով Լուսաղբյուրին առջև հասավ, այնտեղ նշմարեցինք մեր տանուտեր Կարապետը, որ դերանդին ուսին, դեպի մեծ երաժշտադեղը հառաջանալով, Կոմիտասի ձեռքը համբուրեց և ըսավ. «Փառք, հեյ տեր Աստված, ողորմությանդ մեռնեմ, ուրկից ղրկեցիր մեղ Հայաստանի այդ պյուլպյուլը...»։

Կոմիտասը «Ազգային հանրապետություն» կոչված Պարտիզակին մեջ ուներ իր սիրելագույն վայրերը, սկսյալ «Թղուկ Անտառ»-ն մինչև ծովանայց հրաշագեղ բարձունքները, որոնք պոլսահայ երգակոտ բանաստեղծներուն, նկարիչներուն և սիրող զույգերուն նախընտրած անկյունները կհանդիսանային։

Պարտիզակ—«Վերին կալեր»

1913-ի ամրանը, Պարտիզակի մեջ Կոմիտաս վարդապետին ներկայութիւնը առիթ ստեղծեց ժողովրդական խանդավառութեան։ Պոլսահայութեան ամեն դասակարգ, նուէրներ կղերական հայանի դեմքեր ամեն օր խումբ-խումբ կուգային Պարտիզակ, վայելելու հայ գիւղին մեջ ազատ շունչով կատարվող Կոմիտասյան տոնակատարութիւնները...։

Կարելի՞ է արդյոք մոռանալ Պարտիզակի «Վերին կալերն» ու «Վերին արտերը», ուր հայ շինականը իր հնձած ոսկեվառ ցորենը շեղջ առ շեղջ դիզելին հետո, կսկեր նահապետական գործիքներով կալսել կիզվէչ արևին տակ, մինչ հեռվին կը լսվեր Կոմիտասի «Հորովել»-ը...։

Ինչպե՞ս չվերհիշել «Ս. Մինասի» հայանի կաղնուտի անտառներուն մեջ տոնի օր մը։

Համատարած կանաչութեանց մեջ հորձանուտ ջուրի մը մոտիկ, Կոմիտասը կրթնած ավերակ մատրան խաչքարին, որ դարեր առաջ Հայաստանեն բերված էր, կերգեր «Հուր-դա-լուրը»...։

Անոր քով նստած էր Ռուբեն Զարգարյանը, իսկ ոտներուն մոտ ծնրադրած կենեկեալը պարտիզակցի ծանոթ շինականը՝ ածխագործ Կարապետ աղան...։

Այդ անմոռանալի պահը, երեսուն երեք տարի վերջ, ես փորձեցի կտավին հանձնել իմ համեստ ուժերով։ Նկար մը, զոր կպահեմ իբրև թանկագին հիշատակ։

## ԿՈՄԻՏԱՍԻ «ԱՆՈՒՇ» ՕՓԵՐԱՅԵՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ՝ «ՓԸԹԻ-ՇԱՆԻ» ԶՄԵՌԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻՆ ՄԵՋ

Մեծ երաժշտագետ-երգչին հասած հոգեկան դժբախտութիւնեն վերջ, անոր աշակերտներեն խումբ մը միանալով Պոլսո հայ տարամարկ թատերական խումբին երիտասարդ դերասաններուն (որոնցմե շատերը նույնպես Կոմիտասի «Գուսան» երգչախումբին անդամներն էին) 1919-ի գարնանը «Փըթի-Շանի» ձմեռային թատրոնին մեջ, դերասան Աշոտ Մատաթյանի գլխավորութեամբ առաջին անգամ ըլլալով ներկայացուցին Կոմիտասի ձայնագրած «Անուշ» օփերային որոշ հատվածներ՝ իր նախնական վիճակով։ «Փըթի-Շանի» ծովածավալ հայ հասարակութիւնը օվացիաներով դիմավո-

բեց տարաբախտ Կոմիտասի «Անուշ»-ի հատվածներու բեմադրությունը, որը դժբաղտաբար եղավ առաջինն ու վերջինը...։

Այդ օրվան «Անուշ»-ի ներկայացման մեջ իրենց երաժշտական և բեմական ընդունակությունով աչքի զարկին «Գուսան» երգչախումբի երիտասարդ սանուհիներն Արշալույս Թերլեմեզյանը (Անուշի դերին մեջ) և Ասրիկ Դերձակյանը[1]) (Անուշի մոր դերին մեջ)։

Այդ օրվան դերակատարներուն արժանի են հիշվելու Տրդատ Նշանյանը (Մոսիի դերին մեջ), Եղվարդ Զաքիրասը, դերասանուհի տիկին Հրաչյա Դերձակյանը և ուրիշներ։

Այսօր, երբ մեր սիրելի սովետական աղատ և երջանիկ հայրենիքին ամեն ծայրերեն հնչող Կոմիտասյան ստեղծագործությունները հայ ժողովրդի սեփականությունն են դարձեր, ժամանակն է օտար և մութ անկյուններեն ազատագրել Կոմիտասի հոբինած «Անուշ» օպերան։

Լիահույս եմ, որ համեստ հուշերուս ընթերցողները, իբր նվիրական պարտականություն, պիտի օգնեն այդ գործին և գեղեցիկ օր մը հրապարակ պիտի գա այդ մեծարժեք ստեղծագործությունը։

## ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ԿՈՄԻՏԱՍԻ ՄՈՏ

1915-ի աշնանավերջին, տարաբախտ Կոմիտասի հին բարեկամ, ներկայիս խնամատար բժիշկ Վանլամ Թորգոմյանի արտոնությամբ, հայրս որոշեց տեսնել հիվանդը՝ հոգեկան բուժարանին մեջ։

Կրկնակի թախանձանքիս վրա, հայրս հավանեցավ, որ իրեն ընկերանամ։

Թաքսիմեն կառքով մը հաղիվ մեկ ժամեն հասանք Շիշլի անհորիզոն դաշտերուն մեջ մեկուսացած, պարտեզապատ մեզ ծանոթ ֆրանսական մասնավոր հիվանդանոցը, Հոբիտալ տը-լա-բե, որուն մեկ մասն ալ հատկացված էր հոգեկան մասնավոր բուժարանին։

---

[1]) Ներկայիս դերասանուհի՝ Երևանի Աղբերեջանական թատրոնին մեջ։

Երկաթյա դռնեն մեզ դիմավորեց Ֆրանսացի հիվանդապահուհի մը, որ մեզ առաջնորդեց հոգեկան բուժարանը, ինձի առաջարկելով նստիլ և սպասել։ Հաղիվ նստած, ինձմե քիչ հեռու առաջին հարկի պատուհանին առջև տեսա Կոմիտասը և անոր մոտ հսկող հիվանդապահը։ Կոմիտասը ծովորական սքեմը կը կրեր. գլուխը ծածկած էր թավշյա փակեղով։

Իմ վրաս ձգած անթարթ նայվածքեն արդեն հասկացա, որ իր կորուստը վերջնական էր։

Մեր տունը եկողներուն հայրս խոր թախիծով կկրկներ մեծ հոգեբույժ բժշկապետին ըսածը, թե ըստ իր կարծիքին, անբուժելի է Կոմիտաս վարդապետին հասած դժբախտությունը...։

Իսկ ավելի հետաքրքրվողներուն, երբ անոնք մանրամասն կուզեին հայրիկես տեղեկանալ Կոմիտասի գիտակցական կյանքի մասին, հայրս վշտալիր ձայնով մը հետևյալն ըսավ. «Հոգեբույժ բժշկապետին ներկայությամբ 15 վայրկյան իմ տված հարցումներուս, տարաբախտ Կոմիտասը միայն թյուրքերեն լեզվով շարունակ կը կրկներ. «Երբեք չեմ ճանչնար ձեզ և երբեք ալ չեմ ուզեր ձեզ հետ խոսիլ»։

* * *

1927-ին, երբ Փարիզեն Թիֆլիս եկավ Ջութակահար փոքր եղբայրս՝ Թորգոմ Մեսրոպյանը, սկսա մանրամասն տեղեկություններ քաղել մեր տարաբախտ Կոմիտասի մասին։

Եղբայրս պատմեց, որ ամեն կողմե Փարիզ հասնող հայերուն փափաքն էր այցելել Կոմիտասին։ Անոր բուժարանը կը գտնվեր քաղաքին արվարձաններեն Վիլ-Ժուիֆ-ի մեջ։ Բժշկին արտոնությամբ կարելի էր իրեն այցելել և նույնիսկ երաժշտության միջոցով հիվանդը զբաղեցնել։

Փարիզի հայոց եկեղեցվո առաջնորդ Գիպարյանի առաջարկով, հայրս և եղբայրս, երաժշտական քառյակի մը հետ կհասնեին Վիլ-Ժուիֆ և Կոմիտասը կը գտնեին կասքենիի մը շուքին տակ կեցած, գիշերանոցով, բոլորովին կերպարանափոխ և նայվածքը անկենդան։ Կը փորձեին երաժշտությամբ սթափեցնել անոր խանգարված ուղեղը, բայց իզուր։ Կոմիտասը անգիտակ իր շրջապատին, դատնալով դեպի ծառը, լուռ ու մունջ, կսկսի խաղալ ծառին բունին հետ։

Հերթական բժիշկը այցելությունը բավ համարելով՝ հիվանդը կը հեռացնե։

1929-ին, Թիֆլիս Հայաբնակ մեր նկարիչ ընկերներեն Եղիշե Թադեոսյան և Դիգո Շարբաջյան անակնկալորեն ինձ մոտ հյուր բերին Գոլոս մեր տան վաղեմի ծանոթ նկարիչ Փանոս Թերլեմեզյանը, որ Փարիզեն վերադառնալով, հյուրասիրված էր Եղիշե Թադեոսյանի տունը։

Այդ այցելությունը առիթ դարձավ, որ մենք երկարօրեն խոսենք Կոմիտասի մասին։ Ջանացի Թերլեմեզյանեն տեղվանալ Կոմիտասի Փարիզի բուժարանին մեջ անցուցած կյանքի մասին Թերլեմեզյանը պատմեց։

«Հանախակի տարաբախտ Կոմիտասին այցի ատեն, այս կամ այն հայ ընկերոջ խնդրանքով, կփորձեի զայն հետաքրքրել Վանի և Մուշի ժողովրդական երգ ու պարով, այս անգամ ալ, Ամերիկայեն Փարիզ վերադարձիս, իբրև նվիրական պարտականություն շտապեցի Կոմիտասի մոտ.. Հոգեբուժարանի բժշկապետին արտոնությամբ մոտ սենյակը, բազմոցին մեկ անկյունը նստած էր Կոմիտասը ծալապատիկ, լուռ ու մունջ։ Անոր գունատ դեմքը, վտիտ մարմինը և արդեն սպիտակած մուրուսը ալեկոծեցին սիրտս։ Անդիմադրելի հուզումով փաթաթվեցա իրեն, ջերմագին կարոտով համբուրելի զայն կրկին և կրկին արցունքներս թափվեցան իր այտերուն վրա։ Հազիվ կրցա իր թանկագին օրախությունի պատասխանը ստանալ, կես ժամե ավելի իր քովը նստած, աչքերս իր տարտամ հայացքին հառած ձեռքերս իր ոսկրացած ձեռքերուն մեջ..։ Իմ ամեն մեկ հարցիս ճշգրիտ լակոնիկ պատասխանը պահ մը մելթարական թվեցավ։ Իմ առաջին հարցումներս եղան երաժշտության մասին, կցանկանար արդյոք հայկական կամ եվրոպական երաժշտություն լսել, կամ թե ուրն ավելի կդերադասեր։ Կոմիտասի պատասխանը եղավ՝ երկուքն ալ։ Հնչյունելով փարիզյանակ դերասան մեկ ընկերոջս փափաքը զինքը տեսնելու, Կոմիտասը դեմքին անախորժ ձև մը տալով ըսավ, «ոչ ոքի կուզեմ տեսնել»։ Իսկ երբ ես ըսի. «Սիրելի բարեկամս, մարդկությունը մի ատեր, գիտես, որ ամբողջ հայ ժողովուրդը քեզ կսպասե, քու վերադարձիդ համար կնատապի...»։ Նա այդ բոպեին իր գիտակցությունը լիովին կորսնցուցած, կցկտուր բառերով ինձ մատնացույց ըրավ քովի սենյակը, ուր իբր թե անգունդ մը նկատելով իրեն վիճակված էր միայն այնտեղ երթալ..։ Ես բոլորովին փոխելով իմ խոսքը, ըսի. «Եկուր միասին Սևանա

կղզին երթանք կամ էջմիածին...», իսկ ինքը ուսերը թոթվելով քմծիծաղով մը ավելցուց.» Այ Փանոս Ջան, քանի որ եկեր եռ, այստեղ հետս մնա։

«Իսկ երբ ես ուզեցի հրաժեշտ տալ, նա սրտնեղած, առանց ինձ պատասխանելու, անցավ քովի սենյակը։ Այլ անդամներ ալ, դարձյալ հոգեբուժարանին բժշկապետին թույլտվությամբ, հայ երաժիշտներ և երգիչներ տարինք, և բացի մեկ անդամեն, որ երդավ առաջինը և վերջինը, Կոմիտասը սթափելով սկսավ շշնջալ «Մեր դրանը խնկի ծառ, գյուլում ջանն երգը»։

«Ամեն անդամ ալ վերադարձանք այդ մահազուժ մթնոլորտեն անժխտիթար և արյունոտած սրտով»։

Նկարիչ Փանոս Թերլեմեզյան հառաչով մը սկսավ պատմել Կոմիտասին իր տված այցելություններուն ամենադառնագինը, հայտնելով, որ մինչև իր կյանքին վերջը պիտի հիշեր, երբև աղեկտուր մեկ պատկեր...։

Փարիզեն վերջնականապես Հայաստան տեղափոխվելե առաջ այցելեր էր իր թանկագին Կոմիտասին վերջին հրաժեշտ տալու...։

«... Այդ օրը, ինչպես հաճախ, դարձյալ ծառի մը տակ կանգնած էր տարաբախտ Կոմիտասը, ձեռքին նուրբ ոստ մը բռնած։ Այդ օրը բոլորովին զժգույն և ալեհեր էր Իր շալ բիժեռայի կիսաբաց կուրծքեն երևցող ոսկրներեն ալ ավելի սասակացուցին հուզումս... Մեզմ ձայնով մը բարևեցի, սկսա մեր միասին եղած օրերեն ուրախալի պատկերներ վերհիշել։ Բերայի մեր տան ծերունի խոհարար Վանեցի հաջի-աղբոր ապսպրանքներ տվի, հանձնարարեցի ճաշի համար պատրաստել յուղալի վոռշը, զոր Կոմիտասը շատ կը սիրեր։ Ժամ մը ավելի մեր անցյալ կյանքի անց ու դարձի պատկերները ճարպիկ դերասանի նման իրեն ներկայացուցի, կրկին և կրկին ծիծաղելի քրքիջներով ձեռքերս պարզեցի և պարեցի, մինչև իսկ Մուշո Սուլթան Ս. Կարապետի լաբախաղացին հարազատ բարբառովը երգեցի, որը անցյալ օրերուն լիաթոք քրքիջ կպատճառեր իրեն..., բայց իզուր։ Հերթապահը հոգեառի մը պես մոտենալով հայտնեց, որ հիվանդին հանգիստի ժամն էր արդեն... Կոմիտասի տարտամ և անկենդան նայվածքին տակ, արյունվիա սրտես պոռթկացող զառն արցունքներ թափելով, վերջին մաս բարյավս հեկեկացի... ի զուր ինձմե հեռացող ձեռքը խնդրելով...։ Հոգեպես փշրված, հեռացա Վիլ-Ժուիֆեն։

Այդ տարվան սկսյալ Նկարիչ Փանոս Թերլեմեզյան Երևանն ամեն անգամ Թիֆլիս գալուն, իբրև հարազատ կայցելեր ինձ։ 1930-ին, երբ Թիֆլիսի Հայարտան մեր նկարչական միությունը կազմակերպեց Թերլեմեզյանի անհատական ցուցահանդեսը, իբրև-կոմնները, իմ տանը (Կանովսկի փողոց № 23), ուր հաճախակի մեր Հայարտան արվեստագետներն ալ կհավաքվեին, գեղարվեստական անմոռանալի ժամեր կվայելենք։

1936 թվականին, Թերլեմեզյանի հետ ընակեցանք Աբովյան փողոց № 62 տան մեջ։

1936-ին, երբ Երևան-Կուլտուրայի տան մեջ կատարվեցավ Կոմիտասի ամյոնեներուն փոխադրության սգահանդեսը, բացի մեր տան նկարիչներեն և երաժիշտներեն, շարք մը գրողներ, մասն Թերլեմեզյանի ընակարանը, իբրև հանգուցյալ Կոմիտասի ամենամերձավորին, հայտնելու իրենց ցավակցությունը։

Վաղ առավոտյան Կուլտուրայի տունը հասանք։ Այնտեղ գրանվող արվեստագետները հերթով պատվո պահակ կազմեին դագաղին շուրջը։ Ի վերջո իմ ալ կարգս եկավ և ցավով դիտեցի այդ կենսունակ և մեծ արվեստագետին անհանգնչելի դիմագծերը։

Կուլտուրայի տան դահլիճը լեցված էր շքեղ պսակներով։ Կար, նվագախումբ և երևանցիները ժամերով անցան դագաղին առջևեն իբրև վերջին հարգանք անմահ վարպետին։

Այդտեղ էր Թերլեմեզյանը, սգակիր և արտասվաթոր։ Փարիզեն դագաղին հետ զրկված էր խիստ ճաշակավոր քնարաձև ծաղկեպսակ մը, որ Թերլեմեզյանի առաջարկով զետեղվեցավ Երևանի երաժշտական թանգարանին՝ Կոմիտասին հատկացված բաժնին մեջ։

Իրիկնամուտին Կոմիտասի դագաղը արվեստագետ ընկերներու ուսերուն վրա, փոխադրվեցավ հին գերեզմանատան պանթեոնը։ Բազմահազար մարդիկ խռնված էին թափորին անցան ճամբուն վրա, իբրև հարգանքի ցույց։

Հին գերեզմանատան պանթեոնին մեջ, Մոցարթի ըրդյուեմի եղանակով, հողին հանձնեցինք անմահ երաժշտագետ Կոմիտասի մարմինը։

Կարծես երկինքն ալ այդ միջոցին մնացավ հուզարկավոր ժողովրդի վշտին, անձրևի տարափով մը Կոմիտասի երգերեն «Զի-

նար ես, կռանալ մի» երգեց Հայկանուշ Դանիելյանը, վոգեկոչելով ներկաները։ Ծերունազարդ Փանոս Թերլեմեզյանը հեկեկալով ավ մը հով նետեց դագաղին վրա և ըսավ. «Վերջապես հասար մուրազիդ, քու հայրենի սուրբ հողին մեջ հանգչելով։ Հավիտենական հանգիստ ասկարներուդ, անմահ Կոմիտաս...»։

1937-ին, հիշողությանս ապավինելով նկարեցի Կոմիտասը Շիշլի բուժարանին մեջ, վերջին անգամ իմ տեսած արտահայտությամբ։ Իրիկուն մը նկարը ցույց տվի Թերլեմեզյանին, ընդունելով, որ ընե իր դիտողությունները... Թերլեմեզյան երկարօրեն դننեց, նմանությունը և տիրող մանրակրկիտությունը գտավ գովելի իսկ դանկին անհամաչափ շրջագծի մասին ըրավ իր դիտողությունները, և ընդհանուր նկարիս նյութատավորման համար իր խորհուրդները տվավ։ Առաջարկեց աշխատանքս ավելորդ տեղ չծանրաբեռնել։ Մեծ նկարչին քաջալերանքը ստիպեց զիս իրեն համարձակորեն առաջարկել, որ անպատճառ ինքը կատվին հանձնե անմահ Կոմիտաս վարդապետին դիմանկարը։ Նկարիչը դողդողուն ձեռքերը ցույց տալով հուզված շեշտով ըսավ. «առաձգականությունը կորսնցուցած այս մասներով միթե կարելի է Կոմիտասը նկարել»։

Ու հազար անգամ ափսոսաց, որ իր վերջին տարիներու նվիրական լոգը հավիտենապես պիտի մնար անիրագործելի...։

Երկար տարիներ Լոնտոնի մեջ վայելեր ենք Կոմիտասյան հայկական ժողովրդական երգերը, Գուլինս-հոլի անվանի համերգային դահլիճեն սկսյալ մինչև Ռաֆֆի—Լասարա ակումբը, որոնց համար Փարիզեն կհրավիրվեին Կոմիտասի լավագույն աշակերտուհին և աշակերտ Մարգարիտ Պապայանը և Արմենակ Շահ-Մուրատյանը։ Իսկ մեր Պոլիս վերադարձեն ետք, 1911—1915, մինչև իր ծանր հիվանդությունը, բազմաթիվ անգամներ բախտ եմ ունեցեր զայն լսելու։ 1911-ի ամառեն սկսյալ ես չեմ հիշեր գեթ փոքր ժամանակամիջոց մը (բացի իր երաժշտական գործերով Պոլսեն բացակայելը) որ ես ամիսը քանի մը անգամներ չլսեի իր քաղցր ձայնը։

Կարելի է նույնպես մոռնալ Կոմիտասի շունչովը սնված ու աճած «Գուսան» երգչախումբին այն փառավոր համերգները, որոնք տեղի կունենային թե Բերայի և թե Պոլսո հայաշատ մյուս թաղերուն մեջ։ Այդ համերգները լսելու համար մարդիկ կուգային Պոլսո նույնիսկ ամենահեռավոր անկյուններեն։

Հաճախ հպարտությամբ կը հիշեր իր աշխատանքով հայ ժողովրդական երգերու հմտություն ձեռք բերած տաղանդավոր երգիչները. Սպիրիտոն Մելիքյան, Արմենակ Շահ-Մուրատյան, Մարգարիտ Պապայան, Մանվելի Պերպերյան, Վարդան Սարգիսյան, Սեմերջյան, Սրվանտզյան, Եքսերջյան, Կանանյան, Ազատյան, Մեհրաբյան և դեռ տասնյակներ։

1916 թվականին սկսյալ ասոնցմե մեկ քանին թե Պոլսո և թե այլ վայրերու մէջ շարունակեցին Կոմիտասի սկսած գործը. ստեղծեցին երգչախումբեր, կազմակերպեցին համերգներ, տարածելով հայ ժողովրդական երգերուն անզուգական գեղեցկությունները, թե հայ, թե օտար ժողովուրդներուն մեջ։

Այսօր համայն հայությունը փառքով և պարծանքով կ'հիշատակե աշխարհի առջև իր ուրույն երաժշտության ռահվիրաներեն հայ ժողովուրդի երգի կոթող Կոմիտասի անմահ անունը։

Սովետական Հայաստանի ծաղկող մայրաքաղաք Երևանը ռադիոյի միջոցավ ամբողջ աշխարհին կը հաղորդե հայկական ինքնուրույն երաժշտությունը և Կոմիտասի անունը։

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

### ԻՐ ՄՈՐ ՄԱՂԹԱՆՔԸ*)

„Քեզի տեսնեմ, իմ հատորիկ,
Կյանքիս ուղին, սիրազեղ,
Հայտ ու անհայտ դու որոնն,
Քեզի լինեն իրազեկ։

Մի թափառե կյանքի պարապ
Անապատում դու ի զուր,
Քեզ պահապան սուրբ հավատս,
Հուսս, սիրս լույս ու հուր։

ԿՈՄԻՏԱՍ

*) Ընդօրինակված Թ. Աղասյանի հրապարակումից։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | | էջ |
|---|---|---|
| 1. | Երկու խոսք | 5 |
| 2. | Առաջին հանդիպում | 7 |
| 3. | Կոմիտասի Պոլսո Բանկալթիի տունը | 12 |
| 4. | Կոմիտասի փառքի օրերեն | 14 |
| 5. | Կոմիտաս՝ Բումելի-հեսարի Շեյիտլիքին մեջ | 17 |
| 6. | Կոմիտասի հայրենի աբաղաղը | 20 |
| 7. | Կոմիտասը Խորեն Էֆենտի Խրիմյանենց տան մեջ | 21 |
| 8. | Կոմիտասը «Գառագեղի պողաջաճի»-ին խանութին մեջ | 29 |
| 9. | Կոմիտաս Պարտիզակի մեջ | 30 |
| 10. | Կոմիտասի «Անուշ» օպերայեն հատվածներ «Փրքի-Շանի» ամֆոային թատրոնին մեջ | 36 |
| 11. | Վերջին անգամ Կոմիտասի մոտ | 37 |
| | Հավելված | |
| 12. | Իր մոր մաղթանքը | 44 |

Պատ. խմբագիր՝ Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎՖ 01205 Պատվեր № 768 Տիրաժ 3000 Տպագր. 3 մամուլ.
հեղ. 2 մամ. Ստորագրված է տպագրության 28/II 47 թ.

Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից պոլիգր. և հրատ. վարչ.
№ 3 տպարան, Ալավերդյան № 65 Երևան, 1947

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0036996

ԳԻՆԸ 4 Ռ.

A I/2979